

ՆՆԱԴԱՐՅԱՆ ԱՍՏՂԱԴԻՏԱՐԱՆ ՎԱՐԴԵՆԻՄԻ ԼԵՌՆԵՐՈՒՄ, ՍԵՎՍԱՐ ԼԵՌԱՆ ԼԱՆՁԻՆ

(հայտնաբերվել է 1967 թ. ճարտարապետ
Ս. Պետրոսյանի կողմից, Նայասարան)

Աստղագիտական բովանդակությամբ՝ ժայռապարկերների հսկա համակարգ է հայտնաբերվել Գեղամա լեռներում (Նայասարան), օրինակ՝ Յուլի և Օրիոնի /Նայկի/ համաստեղությունները: Նանդիպում են՝ երկրագունդը մարդկանցով, Արեգակի, Լուսնի և մյուս երկնային լուսավորների պարկերները:

Սկիզբ առնելով Զոդի ոսկու հանքերից, հնագույն քարավանային ճանապարհը ձգվում է Սևանա լճի հարավային ափերից և Մարտունուց, այնուհետև, թեքվում է դեպի հարավ, Վարդենիսի լեռնաշղթայի արևմտյան լանջերով անցնում է Մարտունուց մինչև Սեյմյան լեռնանցքը: Այս ճանապարհի երկու կողմերում էլ հայտնաբերվել են հնադարյան աստղագիտական կենտրոններ: Այդ ճանապարհի հարևանությամբ գտնվող՝ առաջին և ամենանշանավոր օբյեկտը՝ աստղագիտական դիտարանների քարե քանդակների հրաշալի համալիրն է, փեղադրված Սևսար լեռան ժայռին: Այսպես գերակշռողը հանդիսանում է քարե սալիկը՝ 3մ x 2մ չափերով, որի վրա մեքադյա հարիչով քերված են փարբեր նշաններ, երկնային լուսավորների և համաստեղությունների բազմաքանակ պարկերներ:

Ըստ Ս. Պետրոսյանի գյուրերի նախկին ԽՍՀՄ Կենտրոնական հեռուստատեսության պարվերով նկարահանվել է «Նկարներ ժայռին» գիրա-հանրամարտչելի կինոնկարը (սցենարիստ Ա. Կակոսյան, ռեժիսոր Ժ. Ավետիսյան, օպերատոր Ս. Բալասանյան):

Լեռան գագաթին հայտնաբերվել է վեհասքանչ և հզոր եզական կիկլոպային բերդ (Ք. Ա. 3-րդ հասարակական սկիզբ), որին հովիվները անվանում են Շելիսի – Չինգիլ: Լեռան բարձրությունը՝ 3250 մետր է: Նեռավոր ժամանակներում լեռնաշղթայի մեծ մասը ծածկված է եղել խիտ անտառներով: Բերդից ոչ հեռու, Ս. Պետրոսյանի կողմից հայտնաբերվել է ժայռային նկարներ, որոնց վրա պարկերված են՝ որսորդության փեսարաններ, լուսնային օրացույց և այլն:

Բերդը կառուցվել է չմշակված, մեծաքանակ քարերից առանց շաղախի: Պարերի հասարակությունը հասնում է 2,5 – 3 մետրի: Բերդի շրջակայքում հայտնաբերվել է Յուլի /Բել/ և Օրիոնի /Նայկ/ համաստեղությունների եզական նկար, որը ոչ պակաս, քան՝ 4 հազար փարեկան է: Միանգամայն հնարավոր է, որ Նայկբերդը ամենաբարձր լեռնային ամրոցն է նախկին ԽՍՀՄ-ի փարածքում:

Նախորդ



Նաջորդ

Բովանդակություն

Քաղաքակրթության քարե փարեգրությունը